## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Միլենա Հովհաննիսյան, Միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023թ. նոյեմբերի 13-ից նոյեմբերի 17-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակն էր «Ճգնաժամ և դիմադրողականություն» թեմայով դասընթացին մասնակցություն, տնտեսական հարաբերությունների տարբեր ոլորտներում ճգնաժամերի հետևանքով առաջացող խնդիրները հասկանալու նպատակով գիտելիքների ձեռքբերում:

5. **Քննարկված թեմաները՝**

   - Վնասի գնահատման ժամանակակից գործիքներ
   - Քաղաքականության արձագանքը զինված հակամարտությունների ժամանակ. Ուկրաինայի դեպքեր, տեղահանված անձինք
   - Էներգետիկ կայունությունը պատերազմի ժամանակ
   - Փախստականների ճգնաժամային քաղաքականություն
   - Covid-19 համաճարակ. աշխատաշուկայի զարգացումներ և քաղաքականության դասեր

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցեր:**

Մասնակիցների կողմից շնորհանդեսի միջոցով ներկայացվել է ՀՀ-ում «Covid-19» համաճարակի հաղթահարմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացված միջոցառումները:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:**

Դասընթացի ընթացքում որոշման ընդունում կամ փաստաթղթերի ստորագրում նախատեսված չէր:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Հաշվի առնելով միջազգային համագործակցության վարչության գործառույթները, որոնք ուղիղ առնչվում են միջազգային ֆինանսական կառույցներից ֆինանսական ճգնաժամերի, «Covid-19» համաճարակի և զինված հակամարտությունների հետևանքների հաղթահարմանն ուղղված պետական մակարդակով իրականացվող միջոցառումների իրականացման նպատակով ստացվող աջակցությունների ներգրավման հետ՝ հետևաբար դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները օգտակար կլինեն աշխատանքի ընթացքում:

9. **Ստորագրություն, ամսաթիվ:**

**22.11.2023թ.**